

ԿԱՐԳ

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՌԱԲԼՈՒՐ» ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՆԹԵՈՆ-ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են ՀՀ պաշտպանության նախարարության «Եռաբլուր» զինվորական պանթեոն-հուշահամալիրում (այսուհետ՝ Պանթեոն) հուղարկավորության ենթակա անձանց շրջանակը, հուղարկավորությունների կազմակերպման գործընթացի հետ կապված հարաբերությունները:

2. Պանթեոնում կարող են հուղարկավորվել՝

1) Հայաստանի Հանրապետության և (կամ) Արցախի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների, կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ կամ հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով կամ զինվորական ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողները, Հայաստանի Հանրապետության և (կամ) Արցախի Հանրապետության պաշտպանությանը կամավոր հիմունքներով մասնակցած անձինք,

2) Հայաստանի Հանրապետության և Արցախի ինքնապաշտպանության կազմակերպման և (կամ) զինված ուժերի կայացման գործում անմիջական մասնակցություն ունեցած անձինք,

3) պետության անվտանգության ապահովման, բանակաշինության գործում մեծ ավանդ ունեցած, նշանակալի ծառայություններ մատուցած անձինք, այդ թվում՝ պետական, քաղաքական, հասարակական գործիչներ, հանրային ծառայության մեջ զտնված անձինք:

3. Պանթեոնում չեն կարող հուղարկավորվել սույն կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված այն զինծառայողը կամ անձը, որի վերաբերյալ առկա է տեղեկատվություն այն մասին, որ վերջիններիս զոհվելը (մահանալը) նրանց կողմից ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու կամ այլ ոչ իրավաչափ գործողությունների հետևանք է:

4. Սույն կարգի 2-րդ կետում նշված զինծառայողներին և այլ անձանց Պանթեոնում հուղարկավորելու որոշում կայացնում է ՊՆ զինծառայողների առողջապահական, սոցիալական պաշտպանության և վետերանների հարցերով գլխավոր վարչության պետը՝ սույն կարգի 5-րդ կետի համաձայն ներկայացված

միջնորդությունների վրա համաձայնության կամ անհամաձայնության վերաբերյալ գրառում կատարելու միջոցով:

5. Պանթեոնում հուղարկավորելու համար կարող են միջնորդել՝

- 1) պետական, հասարակական գործիչները,
- 2) մահացած կամ զոհված զինծառայողի կամ այլ անձի հարազատները,
- 3) պետական և տեղական ինքնակառավարման մարմինները:

6. Պանթեոնում հուղարկավորվելու միջնորդությունը պետք է տեղեկատվություն պարունակի զոհված (մահացած) զինծառայողի և այլ անձի կենսագրական տվյալների, մարտական և (կամ) ծառայողական ուղու, ունեցած պետական և (կամ) գերատեսչական պարգևների վերաբերյալ, ինչպես նաև միջնորդությանը կարող են կցվել այդ հանգամանքները հաստատող փաստաթղթերի պատճենները:

7. Պանթեոնում հուղարկավորության միջնորդությունը և կից փաստաթղթերը մուտքագրվում են ՊՆ ԶԱՍՊ և ՎՀ գլխավոր վարչություն և ուսումնասիրվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում, Պանթեոնում հուղարկավորվելու համաձայնության դեպքում Պանթեոնի պետը համագործակցելով ՊՆ և ԶՈՒ ԳՇ այլ իրավասու ստորաբաժանումների հետ կազմակերպում է հուղարկավորության արարողությունը: Պանթեոնում հուղարկավորության անհամաձայնության դեպքում ՊՆ ԶԱՍՊ և ՎՀ գլխավոր վարչությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնում է միջնորդությունը ներկայացրած անձին:

8. Պանթեոնում հուղարկավորությունների գրանցումն իրականացվում է առանձին մատյանում՝ համաձայն սույն հավելվածի Ձևի:

9. Պանթեոնի պետը եռամսյակը մեկ անգամ ՊՆ ԶԱՍՊ և ՎՀ գլխավոր վարչություն է ներկայացնում տեղեկատվություն՝ եռամսյակի ընթացքում Պանթեոնում հուղարկավորված անձանց վերաբերյալ (հուղարկավորվածի անունը, ազգանունը և հայրանունը, կարգավիճակը, հուղարկավորման օրը, ամիսը, տարին):

10. Պանթեոնում հուղարկավորությունների կազմակերպման ընթացքում և այլ հիշատակի օրերին ազգային ու կրոնական ավանդույթների համաձայն ծիսակատարությունների և այլ միջոցառումների իրականացումը թույլատրում է Պանթեոնի պետը՝ ըստ անհրաժեշտության համագործակցելով ՊՆ և ԶՈՒ ԳՇ այլ իրավասու ստորաբաժանումների հետ:

ԿԱՐԳ

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՌԱԲԼՈՒՐ» ԶԻՆՎՈՐԱԿԱՆ
ՊԱՆԹԵՈՆ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ» ԳԵՐԵԶՄԱՆԱՏԵՂԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ,
ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Պանթեոնում գերեզմանատեղերի հատկացման, գերեզմանների կառուցման և հաշվառման հետ կապված հարաբերությունները:

2. Պանթեոնում գերեզմանատեղերը հատկացվում են Պանթեոնի պետի կողմից՝ ըստ Պանթեոնի հատակագծի՝ հաշվի առնելով հուղարկավորվողի հայրենիքին մատուցած ծառայությունը, կոչումը, անցած ուղին:

3. Պանթեոնում գերեզմանատեղերը հատկացվում են «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետում նշված չափորոշիչներին համապատասխան:

4. Գերեզմանի կառուցումն ուղղահայաց և հորիզոնական գերեզմանաքարերի տեղադրումն է, գերեզմանի տարածքի կառուցապատումն ու կանաչապատումը:

5. Պանթեոնում գերեզմանների կառուցումն իրականացվում է ըստ տիպային նախագծի և բացառապես ՀՀ պաշտպանության նախարարության կողմից՝ բյուջետային միջոցների հաշվին: Հաշվի առնելով հուղարկավորվողի հայրենիքին մատուցած ծառայությունը, կոչումը, անցած ուղին:

6. Պանթեոնում գերեզմանատեղերի հաշվառումն իրականացվում է առանձին մատյանով՝ համաձայն սույն հավելվածի Ձևի:

